ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունիսի 2016 թվականի N:250-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ղեկավարի 2016 թվականի հունիսի 9-ի թիվ 14 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի փետրվարի 27-ի նիստի թիվ 5 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի փետրվարի 26-ի նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղարիբջանյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Արտավազդ Պետրոսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Վաչագան Վարդանյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Մանվել Պողոսյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Մարինե Անտոնյանի, Իրինա Ներսիսյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Անահիտ Հակոբյանի լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Կարինե Սերոբյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

3. Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի դեկտեմբերի 8-ին Խորհրդի կազմում հաստատված Արթուր Սարգսյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 8-ը:

4. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Արտավազդ Պետրոսյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Վաչագան Վարդանյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Մանվել Պողոսյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Մարինե Կոջիբրոյանին, Իրինա Ներսիսյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Դոնարա Գևորգյանին:

5. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N56 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «24» N250-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Պետրոսյան Արտավազդ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Վարդանյան Վաչագան	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Սերոբյան Կարինե	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Պողոսյան Մանվել	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Ներսիսյան Իրինա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Կոջիբրոյան Մարինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Գևորգյան Դոնարա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Սարգսյան Արթուր	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է